«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ՀԵՂԻՆԱԿ -Գայանե Վոլոդյայի Քեշիշյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ -6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում----------4

Եզրակացություն----------18

Օգտագործված գրականության ցանկ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր Երկիր մոլորակը կանգնած է էկոլոգիական աղետի եզրին: Եվ աշխարհակործան գործոնները, ցավոք, մեծամասամբ մարդածին են: Մարդը, որ բնության թագն ու պսակն է, արարչագործության գլուխգործոցը, այսօր ավերում է այն չքնաղ բնական միջավայրը, որը տրված էր իրեն ի վերուստ, Արարչի կողմից, այն մշակութային միջավայրը, որը տրված էր իրեն՝ իրեն ծնող ազգերի ու ժողովրդի կողմից (հարկ է նշել, որ ազգային մշակույթները ևս սնվում են արարչական զուլալ աղբյուրից):

Այս ամենի պատճառը ժամանակակից քաղաքակրթության նոր, նյութական շահերի հենքի վրա ձևավորված արժեհամակարգն է: Մարդը ագահորեն ավերում է բնությունը՝ նյութական «բարիքներ» ստեղծելու համար, առանց սրտի ցավի, խղճի խայթի ոչնչացնում է իր նման և, ի վերջո իրեն: Արժեհամակարգի այս խեղումը կարող է կասեցնել միայն և միայն գրագետ կրթությունը: Այն պետք է մարդկության հայացքը նյութական արժեքներից ուղղի դեպի հոգևորը:

Իսկ այժմ մի կարճ անդրադարձ: Ի՞նչ է կրթությունը: Ի՞նչ խնդիրներ է լուծում կրթական գործընթացը: Հակիրճ կրթությունը դա գիտելիքների ձեռքբերումն է սովորելու միջոցով: Այսօրվա կրթական բազում համակարգեր տարբեր մեթոդներ ու միջոցներ են ներկայացնում կրթական պրոցեսը ավելի արդյունավետ դարձնելու համար: Սակայն կարծես թե չի կարևորվում հանգամանքը՝ գիտելիքը:

Ի՞նչ է գիտելիքը: Ինչու՞ է այն անհրաժեշտ: Այսօրվա մարդկությունը կարևորում է գիտելիքի այն մասը, որի արդյունքում մարդը ձեռք է բերում կոնկրետ մասնագիտություն՝ իր նյութական պահանջմունքները բավարարելու համար: Անտեսվում է ամբողջական գիտելիքի մյուս մասը, որը ապահովում է մարդու հոգևոր պահանջմունքները: Արդյունքում մարդը լինում է «հարուստ և հաջողակ», սակայն այդպես էլ չի ունենում լիարժեք, իրական երջանկության զգացողություն: Չբավարարված մարդ արարածը նյութի մրձավազքի մեջ ոչնչացնում է բնության վերջին պաշարները, հրահրում պատերազմներ, քանի որ չի տիրապետում Կյանքի և Տիեզերքի Իրական Գիտելիքին:

Արարող մարդկային տեսակը այլևս կորստյան եզրին է, եթե վեր չհանվի Իրական Գիտելիքը, որը կվերականգնի Արարող Մարդու արժեհամակարգը և կպատասխանի մարդուն հուզող գլխավոր հարցերին. ի՞նչ է կյանքը, ի՞նչ է մահը, ի՞նչ է երջանկությունը, ո՞րն է մարդկային կյանքի նպատակը և այլն: Այս հարցերի պատասխանը կարող ենք տալ, եթե իմանանք, թե որոնք են կյանքի շարժիչ ուժերը՝ օրենքները:

Օրենքների մասին կխոսենք ստորև: Իսկա այժմ հարկ ենք համարում նշել, որ հանրակրթական դպրոցներում ուսուցանվող «Հայ գրականություն» առարկան լիովին կարող է մատաղ սերնդին հասցնել այդ մեծ Գիտելիքի լույսը, որը հիանալիորեն արտացոլում է հայ ժողովրդի բանահյուսության էպոսի մեջ, մեր Մեծերի հանճարեղ ստեղծագործություններում:

Ուսումնասիրության համար հարմար նյութ ենք ընտրել «Կյանքի գիտելիքը Հ. Թումանյանի ստեղծագործություններում» թեման, որը կարելի է կազմակերպել որպես ամփոփիչ դաս, որի ընթացքում Թումանյանի ստեղծագործություններից դուրս կբերվեն և վեր կհանվեն կյանքի և տիեզերքի շարժիչ օրենքները:

ԿՅԱՆՔԻ ԳԻՏԵԼԻՔԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Իսկ ի՞նչ է կյանքը, որո՞նք են կյանքի շարժիչ ուժերը՝ օրենքները:

Տիեզերքում ամեն ինչ, ինչպես և կյանքը, կազմված է նուրբ շերտերից: Կյանքը ունի երեք ոլորտ: Առաջինը ֆիզիկական կյանքն է, որն իր մեջ ընդգրկում է մարդու կենցաղը, փոխհարաբերությունները մարդկանց հետ: Երկրորդ շերտը զգացմունքների և մարդու ցանկությունների շերտն է: Երրորդը՝ անհատի ոգու կյանքն է, որն առնչվում է անհատի ոգեղեն կյանքին, դեպի Տիեզերք ձգտումներին:

Իսկական գրականությունն արտացոլում է կյանքի այդ երեք շերտերը ներդաշնակության մեջ և գրական գործի արժեքն այնքանով է մեծ, որքանով որ նա արտահայտում է ֆիզիկական կյանքի, հոգու և ոգու օրենքները: Այդ օրենքների մեջ կան այնպիսիները, որոնք համապարփակ բնույթ ունեն: Դրանք Տիեզերքի օրենքներն են: Այսպիսով մարդկային կյանքը ղեկավարվում է նուրբ (ոգեղեն և հոգեղեն) աշխարհի օրենքներով, որոնք իրենց արտահայտություններն են գտնում ֆիզիկական կյանքում:

Այդ օրենքները բազմաթիվ են, որոնցից կարևոր նշանակություն ունեն հետևյալները.

1. Սիրո օրենքը
2. Ներդաշնակության օրենքը
3. Վերամարմնավորման օրենքը
4. Պատճառի և հետևանքի օրենքը
5. Միասնության օրենքը
6. Նմանության օրենքը
7. Հիերարխիայի օրենքը

Միայն այս օրենքները գիտակցելով՝ մարդը կարող է գտնել այն հարցերի պատասխանները, որոնք հուզել են մարդկությանը իր ծննդյան արշալույսից մինչև մեր օրերը:

Չնայած մարդկային քաղաքակրթությունը վերջին հազարամյակներին զգալի հաջողությունների է հասել, սակայն ֆիզիկական աշխարհի օրենքներն ի զորու չեն պատասխանելու կյանքի հիմնահարցերին. ի՞նչ է կյանքը, ի՞նչ է մահը, ինչու՞ է մեկն ապրում առողջ, երջանիկ, մյուսը՝ աղքատության և հիվանդության մեջ:

Տիեզերքի օրենքները գիտակցելով՝ մարդը գտնում է իր տեղը կյանքում: Այդ ճշմարտությունը մեզ տալիս է ոչ միայն ժողովրդական գիտելիքի ստեղծագործությունը, կյանքը, այլև հոգևոր աղբյուրները: Դրանք են «Աստվածաշունչը», հնդկական վեդաները, «Կաբբալան» և այլն, որոնք էլ մատնանշում են ճշմարտության ճանապարհը, որը մարդուն տանում է դեպի իր նախահայրենիքը՝ դեպի Աստված կամ Աստվածային Իմաստություն: Որքան էլ տարբեր լինեն ուսմունքները և նրանց մատնանշած ճանապարհները, դրանք հատվում են միևնույն կետում, և այդ կետն էլ հենց Արարիչն է: Այս մարդիկ

թյուրիմացության մեջ են ընկել այն առումով, որ փորձել են գիտությունը հակադրել կրոններին: Իսկ չէ՞ որ և՛ կրոնները, և՛ գիտությունը փորձում են տալ նույն հարցերի պատասխանները, ուրեմն անհրաժեշտ է, որ դրանք լրացնեն մեկմեկու: Կրոնների և գիտության սինթեզի հետևանքն է թեոսոֆիան, որը պատասխանում է կյանքի հարցերին սնվելով կրոններին և փիլիսոփայական տարբեր համակարգերի աղբյուրներից, միաժամանակ դրանք դիտարկելով գիտության տեսանկյունից: Որո՞նք են ժամանակակից գիտության և թեոսոֆիայի տարբերությունները: Հայտնի է, որ գիտությունը փաստերի ամբողջություն է, որից կատարվում են եզրահանգումներ: Այդ փաստերը կուտակվում են ֆիզիկական աշխարհից մարդկային ուղեղի ընկալածի հիման վրա և նույնիսկ հաշվի չեն առնվում ուղեղի այնպիսի վիճակները, ինչպիսիք են երազը, ուղեղի ստանսը: Հիմնվելով միայն արտաքին աշխարհից հինգ զգայարանների ստացած տեղեկությունների վրա՝ գիտությունը հաճախ սխալ եզրահանգումներ է անում: Հայտնի է, որ մարդկությունը գտնվում է էվոլյուցիայի այնպիսի փուլում, որ որոշ անհատների մոտ արդեն ի հայտ է գալիս վեցերորդ զգայարանը, որի միջոցով ընկալվում են ավելի նուրբ աշխարհի օրենքները: Եթե մարդկությունը գիտակցի այս օրենքների գոյությունը, նա կարող է զերծ մնալ չարի և ատելության այնպիսի պտուղներից, ինչպիսիք են անհատի տառապանքը աղքատության և հիվանդության մեջ, սոցիալական դաժան պայքարը, երբեք չդադարող ազգամիջյան վեճերն ու կռիվները: Առաջինն այն է, որ Աստված ամենուր է և ամեն ինչի մեջ: Երկրորդ ճշմարտությունը մեզ ասում է, որ մարդկային հոգին անմեռ է, հավերժ, որ Աստծո մի մասնիկն է և կատարելագործվելով պետք է հասնի Աստծուն: Այս ճշմարտությունը հաստատում են նաև բոլոր ուսմունքները:

Հովհաննես Թումանյանը, լինելով գերզգայուն անհատականություն, զգացել է այդ ճշմարտությունը և դրանք արտացոլել իր ողջ ստեղծագործության, մասամբ քառյակների մեջ:

Հետևյալ քառյակներում արտահայտված է այն գաղափարը, որ մարդկային հոգին (ոգին) Տիեզերքի Մեծ Ոգու մի մասն է:

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,

Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին

Հեռացել է ու վերացել մինչև աստղերը հեռավոր,

Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

Ասի…Հենց լոկ ես աճյունն է ու անունը, որ ունեմ…»

Երբ ճառագեց անծայրածիր Քո ժպիտը հոգուս դեմ,

-Ի՞նչ է աճյունն էդ անկայուն ու անունը, որ ունես,

Դու Աստվա՛ծ ես, դու անհու՛ն ես, անանուն ես ու անես…

Ես շնչում եմ միշտ կենդանի Աստծո շունչը ամենուր,

Ես լսում եմ նրա անկուռ կանչն ու հունչը ամենուր,

Վեհացնում է ու վերացնումամենալուր իմ հոգին

Տիեզերքի խոր մեղեդին ու մրմունջը ամենուր:

Հոգիս տանը հաստատվել-

Տիեզերքն է ողջ պատել,

Տիեզերքի տերն եմ ես

Ո՞վ է արդյոք նկատել:

Գաղտնիք չէ, որ Թումանյանը Տիեզերական գիտելիքը քաղել է ոչ միայն ժողովրդական ստեղծագործություններից, կյանքից, այլև ծանոթ է եղել հոգևոր աղբյուրների քրիստոնեական և բուդդայական ուսմունքներին: Պատահական չէ, որ Հրայր Ուլուբաբյանը ընդհանրություն է տեսնում Թումանյանի և նոր ուսմունքի՝ «Ագնի Յոգայի» ուղիների միջև չնայած «Ագնի Յոգայի» գրքերը տպվել են հազար ինը հարյուր քսանչորսից մինչև երեսունյոթ թվականները: Այս փաստը հաստատում է, որ Թումանյանը եղել է, իր խոսքերով ասած սրտագետ(գաղտնագետ) և կանխազգացել գալիքը:

Բուդդիզմի ուսմունքը հայ գրականության մեջ բարձր են գնահատել Ղ. Աղայանը, Ավ. Իսահակյանը, Ե. Չարենցը: Երբ նոր գրականություն, պոեզիա ստեղծելու գաղափարներով տարված Չարենցը կարծում էր, որ Թումանյանի պոեզիան հետ է մնացել զարգացման նոր փուլից, հետո հասկացավ նրա ստեղծագործության մեծ արժեքը տիեզերական կյանքի արտացոլումը գրականության մեջ: Նա Թումանյանին համարեց հայ նոր քերթության Արարատ և իրեն անփորձ զգաց նրա առջև:

Դու դեռ թույլ ես հոգով և անփորձ ես, Չարենց,

Կրթի՛ր հոգիդ, դարձիր մոգ, իո՛գ և արեգ՝

Ինչպես Գանդին Մահաթմա-հնդիկն հանճարեղ:

Ինչևէ, անցնենք Տիեզերքի օրենքներին, որոնք կազմում են տիեզերական ճշմարիտ գիտելիքի կարևոր մասը: Այդ օրենքներն օգնում են մարուն՝ հասկանալու իր երկրային կյանքի իմաստն ու նպատակը, ճիշտ և ներդաշնակ ապրելու, գիտակցելու իր տեղն ու դերը Տիեզերքում:

Թումանյանն այն անհատներից է, որ հստակորեն գիտակցում էր իր տեղը Տիեզերքում, ընկալում էր, որ կյանքն ամբողջ Տիեզերքում է: Նրա ստեղծագործության մեջ պարզորոշ

երևում է կյանքի բարձրագույն նպատակը՝ ձգտումը դեպ վեր՝ երկնային լազուրին միաձուլվելու, տիեզերական ասղազարդ երկնքում հալվելու համար: Տիեզերքի հետ զրույցը նա սկսել է քսաներկու տարեկան հասակում «Աստղերի հետ» բանաստեղծությամբ, այն իր հակիրճ մարմնացումն է ստացել քառյակներում և ավարտվել «Սիրյուսի հրաժեշտը» բանաստեղծությամբ:

Անթարթափ աչքերով, անխարխափ հոգով

Կարդում եմ քո վեհ ազդումներն անվերջ,

Կարդում եմ պայծառ, ուրախ ցերեկով,

Ու գիշերները ահավոր է ու պերճ:

Ու վերանում է հոգիս զրվարթուն-

Չրկա մոտ ու տար, չրկա վեր ու ցած,

Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,

Ու ես մի ազատ՝ անտարբեր աստված

(Տիեզերքի ընթերցուր)

Սիրո օրենքը Տիեզերքի համապարփակ օրենքներից առաջինն է: Այն մեզ ասում է, որ սերը ոչ թե մեծ կամ փոքր մարդկային զգացմունք է, այլ հզոր տիեզերական ուժ, արարչական դաշտի մի հատված: Տիեզերքի ողջ ստեղծագործությունը արդյունք է սիրո և իմաստնության-իգական և բանականության-արական ճառագայթների միասնության («Աստված սեր է»):

Ահա թե ինչպես է բնութագրում սիրո զգացումը Ա. Կլիզովսկին. «Միասնանալու ձգտումը և սերը Սկիզբների միջև այն հզորագույն շարժիչն է, որի օգնությամբ իրականանում է մարդու երթը էվոլյուցիայի ճանապարհով: Սկիզբների միջև սերը միակ և ամենամեծ ստեղծարար ուժն է, որի համար սահմաններ չկան: Մարդկության պատմությունը ինքնազոհության շատ փայլուն գործեր ու սխրանքներ գիտի, որոնք իրագործվել են սիրով, հանուն հակադիր Սկզբի ունեցած սիրո»:

«Հոգեպես մեռած է նա, ով զուրկ է ներշնչման այդ աստվածային կրակից ներդրված մեր մեջ տիեզերական կեցության կամքով»:

(Ելենա Ռերիխի նամակներից)

Ինչպես նշեցինք, Թումանյանի հերոսուհիները օժտված են անկոպար զգացմունքներով, և ինչպես Լ. Հախվերդյանն է նշում. «Այդպիսի հերոսուհի է Անուշը: Ու եթե ամեն մի արվեստագետ մի օր Օրփեոս է, որ դժոխք է իջնում իր Էվրիդիկեին լույս աշխարհ հանելու համար, ապա Անուշն է Թումանյանի Էվրիդիկեն»:

Թումանյանն իր հերոսների պես օժտված է սիրո մեծագույն զգացումով: Այս առումով նա ևս Օրփեոս է: Ահա մեծագույն Ձեռնադրված Օրփեոսը մահվանից առաջ աշակերտներին ուղղված նամակում բացահայտում է Էվրիդիկեի նկատմամբ տածած սիրո շնորհիվ ինչերի է հասել. «Կենդանի Էվրիդիկեն ինձ կտար երջանկության երանություն, մահացած Էվրիդիկեն ինձ տարավ դեպի ճշմարտություն: Նրա նկատմամբ ունեցած սիրուց տառապած՝ ես ցնցոտիներ հագա ու հասա մեծագույն ձեռնադրվածության: Նրա նկատմամբ ունեցած սիրուց դրդված ես թափանցեցի մոգության գաղտնիքների մեջ, աստվածային գիտելիքների խորքերը հասա, անցա Սամոֆրակիայի քարանձավներով, Բուրգերի ջրհորներով, Եգիպտոսի դամբարաններով: Ես թափանցեցի մահվան ծորքերը, որ այնտեղ կյանք գտնեմ: Եվ կյանքի մյուս կողմում ես տեսա Աշխարհների սահմանները, տեսա հոգիներ, փայլող սֆերաներ,Աստվածային եթերը: Երկիրն իմ առջև բացեց իր անդունդները, իսկ երկինքը՝ իր փայլուն տաճարները: Ես ձեռք բերեցի գաղտնի գիտելիքներ մումիաների վերաբերյալ: Իզիդիայի և Օսիրիսի քրմերը ինձ տվեցին իրենց գաղտնիքները: Նրանք ունեին իրենց աստվածներին, իսկ ես՝ Էրոսին, որի ուժով ես խոսում էի, երգում ու հաղթում: Նրա ուժով ես թափանցեցի Հերմեսի ու Զրադաշտի քերականություն, նրա ուժով արտաբերեցի Յուպիտերի ու Ապոլլոնի անունները»:

(Է. Ճյուրե «Մեծագույն Ձեռնադրվածները»)

«Սիրո բարձրագույն նշանակությունն այն է, որ կենդանուն դարձնի մարդ, իսկ մարդուն մոտեցնի Աստծուն: Տիեզերական օրենքների իմաստնությունը, որը կյանքի հիմքում դնում է այնպիսի հզորագույն գործոն, ինչպիսին է սեռերի ձգողությունը մեկը մյուսի նկատմամբ, որով ցուցանում է սեռերի հավասարարժեքությունը և նրանցհետագա կյանքը զույգերով և ոչ թե միայնակ: Իզուր չէ, որ քրիստոնեական սուրբ գրվածքներից մեկում նշված է. «Կթողնի մարդը իր հորը, մորը, կկպչի կնոջը և երկուսը կլինեն մեկ մարմին»:

Սիրային միասնության մեջ կինն ու տղամարդը լրացնելով մեկը մյուսին՝ հանդիսանում են փոքրիկ տիեզերք, ուր փոքր մասշտաբով տեղի է ունենում այն ամենը, ինչը տեղի է ունենում մեծ Տիեզերքում: Սիրո կրակը հանդիսանում է մշտապես ստեղծագործող ու վերականգնող կրակ կյանքի համար:

Այդ սիրո կրակից ստեղծվում է սերունդ, ստեղծարար գաղափարներ: Եթե տղամարդը բեղմնավորում է կնոջը սերնդի ծննդի համար, ապա կինը բեղմնավորում է տղամարդուն իր սիրով՝ գաղափարների ծննդի համար:

Միայն այդպիսի փոխադարձ լրացումը մեկը մյուսին կտա մարդկային սիրո լրիվ ներկապնակը: Այդպիսի սիրո մեջ խտացված են և՛ ֆիզիոլոգիական, և՛ հոգեբանական հարցումներն ու պահանջները՝ ինչպես մարմնի, այնպես էլ՝ հոգու: Այսպիսի սիրո մեջ ոչինչ ամոթալի, մեղսալի չկա, քանի որ այդպիսի սերը տիեզերական ցուցում է, Կամք, որին պետք է ենթարկվի ամեն ինչ»:

(Ա. Կլիզովսկի)

Յուրաքանչյուր մարդու մեջ կա այդ սիրո ճաճանչը, բայց այն աստվածայինի վերածելու համար պետք է զուտ մարդկային զգացմունքից վերածի անձնազոհ սիրո, անսահման խղճի զգացումի: Այդ զգացմունքն ապրելով՝ մարդը կճաշակի՝ Մեծարենցի խոսքերով ասած, անանձնական ուրախության վայելքը: Ասեմ նաև, որ այդ զգացմունքին հասու ամեն անհատ կարողանում է անգամ չարագործ մարդկանց մեջ տեսնել աստվածային կայծը, և գիտակցում է, որ ժամանակին այն ևս բոցավառվելու է: Այդ պատճառով էլ նա առանց քենի տանում է աշխարհիկ կյանքի ամեն ցավ ու տառապանք:

Նորություն ասած չեմ լինի, եթե նշեմ, որ Թումանյանը հասել էր այդ պայծառ զգացմունքի լուսեղեն բարձրունքներին: Այդ են վկայում հետևյալ քառյակները.

Ո՞նց է ժպտում իմ հոգին

Չարին, բարուն, -ամենքին,

Լույս է տալիս ողջ կյանքիս

Ու էն ճամփիս անմեկին

Ինչքա՜ն ցավ եմ տեսել ես,

Նենգ ու դավ եմ տեսել ես,

Տարել, ներել ու սիրել,

Վատը՝ լավ եմ տեսել ես:

Քան՜ քանի ձեռքից եմ վառվել,

Վառվել ու հուր եմ դառել,

Հուր եմ դառել՝ լույս տվել,

Լույս տալով եմ սպառվել:

Առատ, անհատ Աստծու նման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես,

Հոգիս ծարավ՝ սրան-նրան մրտիկ տալուց հոգնել եմ ես,

Մինը պիտի զար իմ դեմը՝ ճոխ ու շռայլ անհաշիվ,

Ամեն ճամփում ըսպասելուց ու փնտրելուց հոգնել եմ ես:

Նշեմ մի նորություն ևս: Ինչպես ասվեց, Աստծով է լցված ողջ Տիեզերքը, և երբ գերագույն անձնավորությունն զգում է այդ, նա սիրո, խղճմտանքի զգացում է ունենում ոչ միայն մարդու, այլև բնության ավելի ցածրակարգ ձևերի(կենդանիների, բույսերի, հանքանյութի) նկատմամբ: Կենդանիների նկատմամբ խղճմտանքի վեհ զգացմունքի արտահայտությունն են ներքոհիշյալ քառյակները.

Մի հավք զարկի ես մի օր,

Թռա՛վ, գնաց վիրավոր:

Թռչում է միշտ իմ մտքում

Թևը արնոտ ու մոլոր:

Երազումս մի մաքի

Մոտս եկավ հարցմունքի

-Աստված պահի քո որդին,

Ոնց էր համը իմ ձագի:

Նվարդ Թումանյանին գրած նամակներից մեկում, բանաստեղծն ասում է, որ բույսերին նայում է որպես կենդանի արարածների:

Հրայր Ուլուբաբյանը նկատել է, որ այս հարցում ևս Ամենայն Հայոց Բանաստեղծի ու բուդդիզմի գաղափարներն համնկնում են:

Տիեզերքի առաջին օրենքից էլ հենց բխում է երկրորդը՝ ներդաշնակության օրենքը: Կյանքի իմաստը կայանում է ներքին խաղաղության և ներդաշնակության մեջ:Որքան էլ, որ արտաքին գործոնները մարդուն հունից հանում են, մարդը պետք է աշխատի նորից վերադառնալ ներդաշնակ վիճակի: Սիրո զգացում ունեցողը, բնականաբար ձգտում է ներդաշնակության:

Լինե՛ր հեռու մի անկյուն,

Լինե՛ր մանկան արդար քուն,

Երազի մեջ երջանիկ,

Հաշտ ու խաղաղ մարդկություն:

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,

Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու,

Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ,

Դեպ Արևելք աստվածային-հայրենիքը իմ հոգու…

Մանուկ օրից սար ու ձորին ես մնացի մոտ ընկեր,

Աշխատանքին, հանգիստ օրին ես մնացի մոտ ընկեր,

Հեռու մոտիկ սարի վրրիեղբայրներիս ձեն տվի,

Ու էն ձենում մեզ բոլորիս-ճանաչեցին մի ընկեր:

Քանի որ արծարծվեցին «Արևելք» և «Արևմուտք» հասկացությունները, ապա հարկ եմ համարում հակիրճ նշել հետևյալը: Թումանյանի մոտ «Արևելքն» ու «Արևմուտքը» սոսկ լույսի և խավարի սիմվոլներ չեն: Այստեղ ևս հատվում են բանաստեղծի և «Ագնի Յոգայի» գաղափարները: Անցնենք բուն հարցին:

Դեպի ներդաշնակություն մարդը գնում է հազարամյակներ շարունակ: Նա բազմաթիվ անգամներ մարմնավորվելով՝կրթվում է, փորձ ձեռք բերում ֆիզիկական կյանքում և ապա վերադառնում դեպի իր իրական հայրենիքը՝ Տիեզերք: Եթե Զրբաշյանն ասում է, որ «…Թումանյանի քառյակներն արտահայտում են մարդկության Տիեզերքին միանալու անհասանելի նպատակը», մենք կարծում ենք, որ Թումանյանի մոտ շատ հստակ երևում է, որ նպատակը հասանելի է: Չէ՞ որ նպատակի անհասանելի լինելու դեպքում կյանքը կկորցնի իր իմաստը:

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,

Հեքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն,

Ի՞նչ եմ անում ես ցեխերում, աղմուկի մեջ վայրենի…

Ա՛խ, թե նորից գտնեմ ճամփան դեպի էնտեղ, դեպի տուն:

Ամեն անգամ Քո տվածից երբ մի բան ես դու տանում,

Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ինչքան է դեռ մնում,

Զարմանում եմ, թե ով Շրոայլ, ինչքան շատ ես տվել ինձ,

Ինչքան շատ եմ դեռ քեզ տալու, որ միանանք մենք նորից:

Հին աշխարհը ամեն օր

Հազար մարդ է մրտնում նոր,

Հազար տարվա փորձն ու գործ

Ըսկսվում է ամեն օր:

Աստեղային երազների աշխարհներում լուսակաթ,

Մեծ խոհերի խոյանքների հեռուներում անարատ

Անհիշելի վերհուշելի մրշուշներում նրրբաղոտ՝

Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կրհասնեմ նրա մոտ:

Մեր կյանքը-կարճ մի վերելք,

Ապրել հանգիստ ամեն տանջանք ու վայելք,

Ապրել անախտ, անցնել անհաղթ-հոգիանալ ու նորեն

Նյութից զատված, անմեկ աստված-վերադառնալ դեպ իրեն:

Ինչպես երևում է, մարդկային հոգու էվոլյուցիայի շարժիչ ուժը մարմնավորման օրենքն է: Ի՞նչ է Թումանյանի այս քառյակը, եթե ոչ վերամարմնավորման օրենքի ճշգրիտ արտահայտությունը:

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետո, ի՛նչ կա որ,

Ես եղել եմ, կամ կլինեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ,

Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,

Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ:

Այս օրենքն է արտահայտում նաև հետևյալ սևագիր քառյակը՝

Թվում է հար, թե անցյալս ու ապագաս տեսած կամ,

Առաջ ու ետո անհունությունն-ողջ անպակաս տեսած կամ,

Բայց ո՞նց հիշեմ ամեն տեսած, կամ եղածը հասկանամ,

Եվ…անհուն, անհաս տեսած կամ:

Պատահական խոսքեր չեն «անհիշելի վերհուշեր», «թվում է հար անցյալս ու ապագաս տեսած կամ» արտահայտությունները: Թումանյանը սրտի միջոցով է զգացել տիեզերական ճշմարտությունը:

Սիրտ

Դու գիտես մենակ ճամփեն երկնքի ,

Դու գիտես գաղտնիքն երջանիկ կյանքի,

Դու գիտես ամենն ամենից առաջ,

Քո խոսքն է օրենքն ամեն օրենքի:

Մարդկային հոգու էվոլյուցիան տևում է հազարամյակներ: Թումանյանը այս քառյակում արտահայտել է մարդկային հոգու և, բնականաբար, ողջ մարդկության էվոլյուցիան:

Բերանն արնոտ մարդակերը էն անբան

Հազար տարում հազիվ դարձավ Մարդասպան,

Դեռ գնում է ձեռքերն արնոտ ու կամկար,

Ու հեռու է մինչև մարդը իր ճամփան:

Այսպիսով, եկանք այն եզրակացության, որ գրականությունը, և ընդհանրապես գեղարվեստը վերին կյանքի արտացոլումն է, և նյութական աշխարհը ոչ թե պատահականությունների աշխարհ է, այլ ղեկավարվում է բարձրագույն աշխարհների օրենքներով: Գեղարվեստն այնքանով է արժեքավոր, որքանով որ արտացոլում է ճշմարիտ կյանքը և Տիեզերքի ճշմարիտ գիտելիքը: Յուրաքանչյուր իսկական արվեստագետ, լինի դա պոետ, նկարիչ թե երաժիշտ, ստեղծագործության ոգեշնչման պահին միանում է վերին կյանքին՝ ինչպես մարգարեները պայծառացման ժամանակ:

Հետևյալ քառյակներում արտահայտված է Աստծո և Պոետի փոխհարաբերությունը, Պոետի կոչման ի վերուստ լինելը:

Իմ կնունքին երկինքը ժամ, արևը ջահ սրբազան…

Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն ավազան,

Սարը եղավ կնքահայրս, ցողը մյուռոն կենսավետ,

Եվ կնքողն նա ինքը եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Բարձր է հընոց աշխարհն Հայոց ու Մասիսը երկնադետ,

Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել նրա հետ,

Անհաս բանից, ըսկզբանից, երբ չկան էլ դեռ չրկար,

Մինչև վախճանն անվախճանի քընրնում է դարեդար:

Տիեզերքի օրենքներից մեկն է միասնության օրենքը, որն ինքնին խաղում է Տիեզերքի միասնական սկզբի և, բնականաբար, Տիեզերքի բոլոր մարմինների միջև եղախ անտեսանելի կապը:

Ո՛վ անճառ մին, որ ամենքին միացնում ես մի կյանքում

Ամեն կյանքում ու երակում անտես անկեզ բորբոքում,

Ողջ ազատ են, հարազատ էս աշխարհքում Քեզանով,

Ողջը Քո մեջ՝ անմահ, անվերջ, Քեզ են երգում Քո ձենով…

Ահա Տիեզերքի մյուս օրենքներիարտահայտությունները:

Վերամիավորման օրենքը՝

Էսպես էլ հոգին

Փոփոխում է միայն կեղևն արտաքին,

Մարմինն է՝ էսօրվան օրին նմանակ,

Իսկ ինքը անվերջ, ինչպես ժամանակ:

Ահա ներդաշնակության օրենքը՝

Էսպես փոխելով գնում է, գնում,

Գընու՛մ անհունի անճառ սահմանում,

Դեպի գերագանց վիճակն երջանիկ,

Ակն երջանկության, սիրո հայրենիք:

Ահա միասնության օրենքը՝

Ուր չկան մարդիկ և ոչ զգացում,

Ուր ողջին մի մեծ կյանք է միացնում…

Աստիճանակարգի օրենքի արտահայտությունն է պոեմի այն հատվածը, որտեղ հոգևոր ավելի բարձր մակարդակի վրա գտնվող հոգիները աղոթում են ավելի ցածր կանգնած հոգիների համար և հայցում Բարձրյալի ողորմությունը:

Այնտեղ Վերին Երուսաղեմ,

Օթևանում հրեշտակաց,

Ուր որ Ենովք ու Եղիաս

Աղավնակերպ կամ ծերացած…

Յոյնաստեղյան լույս խորանում

Ուր ցավ չկա, ոչ հեծություն

Ընտրյալ հոգին ուրախանում…

Այնտեղ նրանք միշտ բախտավոր

Նայում են նոր լույս երեսին,

Նրա առջը պաղատավոր-

Նրանց համար, որ թողեցին.

Ու իջնում են, մխիթարում

Մեզ տրտմալի աշխարհում:

Կարմայի օրենքը արտահայտված է այս տողերում, ըստ որոնց՝ աշխարհիկ կյանքում ամեն վայելք կամ տառապանք զուտ մարդկային զգացմունքների, ձգտումների հետևանքն է, իսկ մարդկային կրքերից ազատվելու դեպքում մարդը ազատվում է կարմայի կապանքներից:

Եվ էն աշխարհը հրաշալի էր,

Ո՛չ սուգ կար էնտեղ, ո՛չ վայելք, ո՛չ սեր,

Ոչ կարելի էր կորցնել մի բան,

Եվ ոչ ունենալ քաղց ազահության…

Եվ մի՞թե մեծ սիրո՝ ինքնամոռացության, ինքնազոհաբերության օրենքը չի բյուրեղացվել այս տողերում՝

Եվ ի՞նչ է սիրո իմաստը վերին,

Ինչ երջանկության խորհուրդը խորրին,-

Հպվե՛լ, միանա՛լ

Իրեն մոռանալ…

Ի վերջո, կրկնելն ավելորդ չի լինի, որ Թումանյանը այս պոեմում տալիս է մահվան դեմ հաղթանակի տիեզերական հզոր բանաձևը:

Տիեզերքի հավերժական տրոփյունի մեջ հավերժական է մնում ոգեղեն կայծը, որն Աստվածային հյուլեն է, որ ժամանակ առ ժամանակ ընկղմվում է նյութի մեջ և ձեռ առնում կյանքի հոլովույթներում:

Եվ թե հաստատուն մի բան կա անմահ,

Արդյոք իմաստուն հոգին չէ՞ միայն նա,

Ու թե հարթմնի և թե երազում

Ապրում է, տեսնում, լզզում ու հուզվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս թեման կարող է ընդգրկվել ուսումնական խմբակների ծրագրում: Առաջին հայացքից թվում է, թե վերևում ասվածը մի պահ հեռացրեց մեզ բուն թեմայից: Սակայն հարկ ենք համարում կրկնել, որ մարդու մոտ իրական արժեհամակարգ կարող է ձևավորվել միայն նրա «սրտի միջով անցնող», «սրտի լարերին դիպչող» գիտելիքը: Նա կարող է իրապես յուրացնել այն գիտելիքը, որը իր ապրած կյանքում հուզում է իրեն և որը օգնում է ապրել սիրո մեջ, խաղաղ, ներդաշնակ ու բավարարված:

Այս ամենով հանդերձ, մենք ունենալու ենք ոգեղեն հայ մարդու տեսակը, որը կլինի բարի, սիրող, արդար, ուժեղ և հաղթող:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Թումանյան-«Երկերի լիակատար ժողովածու» տասը հատորով
2. Ա. Եղիազարյան-«Մի քանի խոսք»
3. Էդ Ջրբաշյան-«Թումանյանի պոեմները»
4. Լ. Հախվերդյան-«Թումանյան»
5. Ա. Կլիզովսկի-«Վերամարմնավորման օրենքը»
6. Ե. Ռերիխ-Նամակներ
7. Эгю Щяюре-Великие Посвященные
8. Анни Безант- Что такое теософи
9. Николай Рерих-Семь Великих Тайн Космоса